որ՝ «Արվեստը, ըլլա գրական, թե ուրիշ ճյուղերու մեջ, գերագույն արտահայտությունն ըլլալով ցեղին, կը կազմե թերևս նաև անոր գոյության գերագույն իրավունքը, և այսօր հայտնի ճշմարտություն մըն է, թե այն ցեղերը ամենեն մեծերը, ամենեն զորավորները եղած են, որոնց գեղեցկության բագինը ավելի վառ, ավելի ճարճատուն եղած է. և մենք իսկ, կորսված ափ մը ասիացի ժողովուրդ, նույնիսկ հետքերը նախկին ժողովուրդի մը, հարատև ոտքի կոխան դարձած դեպի արևմուտք արշավող բարբարոսներու, ինչո՞վ և ի՞նչ հիման վրա է, որ կը պահանջենք մեր գոյության իրավունքը. որովհետև մեծաբարբառ կարող ենք ըսել, հպարտությամբ և բարձրագլուխ կրնանք ըսել, թե մեր նախնյաց վառած կրակը գեղեցկության, գերագույն իտեալներու բագինին մեջ, թույլ չենք տված, որ մարի, թե աշխարհավեր բարբարոսներու հառաջ բերած խավարը չէ զորած զայն մթագնելու և թե անիկա երբեմն առկայծ, երբեմն նվաղուն, բայց միշտ կենդանի, վառած է, հետզհետե ավելի արծարծվելով, հետզհետե ավելի բոցավառվելով»: Սկզբունքային այս ելակետից էլ Զ. Եսայանը արժեքավորում է «Ցայգալույսը»: Բանախոսի համոզմամբ՝ այդ ստեղծագործությունը ազգի հոգևոր վերածնունդի, ժողովրդի գոյության իրավունքի, հայ քաղաքակրթության ուշագրավ վկայական է ամենից առաջ իբրև արվեստի նվաճում:

Բանախոսը Ռ. Զարդարյանին համարում է «*խորհրդանշական* բանաստեղծ»՝ անմիջապես նկատելով, թե «Զարդարյան խորհրդանշական գրող մը չէ, ինչպես Մալարմե, Սթուար Միլ, Ռընե Կիլ, Մեթերլինկ և ուրիշներ. անիկա իր արվեստագիտական նուրբ բնազդը ունի իբր ներշնչման աղբյուր, և եթե այդ բնազդը իրեն կարելի դարձուցած է, որ անիկա վայելե եվրոպական գրականության հոսանքներուն արդյունքները, ոչ մեկ կերպով չէ քալած անոնց օտար հետքերուն վրայեն»: Մանավանդ նրա հեքիաթները, ինչպես նկատում է Զ. Եսայանը, «կը համադրեն իրենց մեջ բարոյական կարգե հոսանքներու, ընդդիմամարտությանց կամ դաշնակցությանց աշխարհներ»: Այնուամենայնիվ, այս դիտողության մեջ ամենաէականն այն է, որ «գավառական» գրականության համար ամենևին էլ բացառված չի համարում ստեղծագործական շփումը այնպիսի մի ուղղության հետ, ինչպիսին սիմվոլիզմն էր: Սա ևս նոր հայացք էր «գավառական» գրականության նկատմամբ:

Եր. Սրմաքեշխանլյանը ևս Զարդարյանի «Ցայգալույսը» դիտում է «գավառական» գրականության շրջանակներում՝